ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՓՈԽԱԴԱՐՁՄԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N «ԴԴ-ՄԱԾՁԲ-21/14»

ք. Երևան «21» սեպտեմբերի 2021 թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս դեկավարի պաշտոնակատար Ս. Ղազարյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ ԱՓԸՀ»-ն, ի դեմս լիազորված անձ Լ. Շնավրևյանի, որը գործում է ընկերության սեփրն Ա. Մնացականյանի կողմից 01 հոկտեմբեր 2019թ. տրված լիազորագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը առանձնում է փոխադրամիջոցների հետ կապված ապահովագրական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մաս կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տուժը.

բ) Հրաժարվել պայմանագրից և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.3 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Ընդունել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տուժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տուժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ընկալարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուժը և տուգանքը:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև նույնպես հատուկ ստորագրված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույնպարագրով ծառայության ընդունման հաստատման օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե ընդունված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման խոչընդոտի հաղթահարմանն ուղղված միջոցներ:

բ) Կատարողի ևնսառնալն կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայության ընդունումից մերժման:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված կիրառելի հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 113 000 (մեկ հարյուր տասներեք հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կարող է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնել, իսկ Պատվիրատուն՝ վճարել այդ գինը:

4.1.1 2-րդ չափաբաժնի մասով պայմանագրի գինը՝ 93 000 (իննսունմեկ հազար) ՀՀ դրամ, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ դրանս կանխավճար: Կանխավճարի մասով իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների կազմման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումն, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության գինը վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրանական միջոցները Կատարողի հաշվեհամարին հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ավիանիշներ: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների հանար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայության յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (հիսը հարյուրերորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նման ծառայությունը տալն պարհանջվող սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այն չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ոչացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (հիսը հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշխանգվում են ծառայության մատուցման արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների մեջ:

---

[1] Պայմանագիրը ներառում է մինչև ութ չափաբաժին, գումարը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված գների հիման վրա:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորությունների ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրի պայմանները կիրառվում են մինչև պայմանագրի ուժի մեջ մտնելը 1-ին չափաբաժնի մասով՝ 16.09.2020թ.-ից և 2-րդ չափաբաժնի մասով՝ 13.06.2021թ.-ից կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, մինչև պայմանագրի կնքումը Կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվելուց հետո:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հանդիպակաց պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ քրեական գործերի քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ) և (կամ) վերջինիս ընտրված մասնակից ճանաչելը հակասում էր գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հանգամանքի ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագրից հրաժարվելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքման միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի ավելացման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների առաջացմամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանվում է Հայաստանի Հանրապետության կառավարությամբ:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի առաջացած կատարման պայմաններում կողմերի (Կատարողի կամ Պատվիրատուի) օգուտները (հնարավորությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պատասխանատվությունները՝ սույնով պայմանագրի կատարման շրջանակում կատարողի կողմից ապ գործարքները և դրանցից բխող պատասխանատվությունները. դրան են պայմանագրի կատարմանն ուղղված և չեն կարող ապրել պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պատասխանատվության կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պատասխանատվությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մասնակի հրաժարման կամ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պատասխանատվությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնության անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մասնակի հրաժարման ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պատասխանատվությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պայմանագրին ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը հրապարակվում է www.procurement.am հասցեով գործող էլեկտրոնային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակմանը հաջորդող օրվանից: Պայմանագրին ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկացվում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկում է նաև կատարողը էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կատարելությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վիճելը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 9 էջից, կազմում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մաս, բովանդակող կողմին ուղարկում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի ներառյալ կիրառվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԱՅԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՍՏՈՒԱԾԱԳՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ **Դպրոցական գիրքագործարան** Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 25/1 ՀՎՀՀ՝ 02583341 ՀԾ՝ 900011192151 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն Պետական պատվերի կառավարման բաժնի պետ Հ.Հարությունյան _____ Ստորագրություն Կ.Տ.	**ԿԱՏԱՐՈՂ** **«ԻՆԳՈՐ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ** Հասցե՝ ք. Երևան, Հանրապետության 51, 53, տարածք 47, 48, 50 ՀՎՀՀ՝ 02535733 ՀԾ՝ 2170011548060031 «Կոնվերս Բանկ Հայաստան» ՓԲԸ Լիազորված անձ՝ Լ. Ծներյան _____ Ստորագրություն Կ.Տ.

Հավելված N 1
«21» 09 2021 թ. կնքված
«ԳՀՄԱՊՁԲ-2021» ծածկագրով պայմանագրի

ՁԵՎԱԼԻՔԱՅԻՆ ԱՇԽՈՒՅՏՆԵՐ - ԳԼԽԱՑ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՒՄ

ԿՀ դրամ

Ընտրատարած								
							ժամկետը*	հասցեն
հրապարակ ծախսատեսքի շահութաբերի հաշիվը	գնումների պլանում ներառված միջանցքի համարը՝ ըստ ԳՄՄ տարածքային ծրագրի (ՀԾԾ)	անվանում	ապրանքի կամ ծառայության բնութագիր	չափման միավոր	քանակ/ծավալ	միավորի գնային առաջարկ		
1	665111701	Փոխադրամիջոցին նվի հետո կատարված տեղափոխության և ծառայության ծառայություններ	Պահանջվող ապրանքների ցանկը՝ ըստ տեխնիկական բնութագրերի	դրամ	20 000	1	16.09.2020թ.-31.12.2020թ.*	ք. Երևան, Կոմիտաս 15/1 (Պահանջվող դեպքում բոլոր հասցեներ)
2	665111701	Փոխադրամիջոցին նվի հետո կատարված տեղափոխության և ծառայության ծառայություններ	Պահանջվող ապրանքների ցանկը՝ ըստ տեխնիկական բնութագրերի	դրամ	93 000	1	13.06.2021թ.-12.06.2023թ.*	ք. Երևան, Կոմիտաս 15/1 (Պահանջվող դեպքում բոլոր հասցեներ)

*Պայմանագրի ապրանքները կինտոպում են մինչև ապրանքագիրն ուղարկելը: Ընդ որում 1-ին չափաբաժնի մասով՝ 16.09.2020թ.-ից և 2-րդ չափաբաժնի մասով՝ 13.06.2021թ.-ից կնքվելուց հետո ապրանքի ուղարկման համար հատուկ հաստատագրվելու կետ:

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՑԱՆԿ

Հ/Հ	ԱՄՀ հաշվառման համարանիշը	ԱՄՀ մակնիշը	ԱՄՀ տարեթիվը	ԱՄՀ շարժիչի հզորությունը (ձիաուժ)
	1-ին չափաբաժին			
1	050 տ 01	NISSAN X-TRAIL 2.5	2007	169
	2-րդ չափաբաժին			
1	001 Լ 01	TOYOTA LAND CRUISOR PRADO	2018	275
2	002 Լ 01	TOYOTA COROLLA	2018	122

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական դեպարտամենտ
Հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1

Հ/Հ՝ 02583241
Հ/Հ՝ 900011192151
ՀՀ ՆՀ գործադիրների վարչություն

Պայմանագրի ապահովման միջոցները (եթե նախատեսված է)

Ա.Ա. Պետրոսյան

ԿԱՏԱՐՈՂ
«ՐՆԳՈՒ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԿԸ
Հասցե՝ ք. Երևան, Ազատության 51, 53, սենյակ 47, 48, 50
Հ/Հ՝ 03535733
Հ/Հ՝ 2170011548060001
«Ից-Բա-Բի-Սի Բանկ Հայաստան» ԲԲԸ

Կնքողների անձ՝ և. ընդունման

Լ.Ս.

Հավելված N 2
«__» ____ 2021 թ. կնքված
«ՀՀՇ-ԱՄՍԴՀ-2016» ժամկետային պայմանագրի

«ՀԱՅՏՆԱՍ ՇԱՍՏԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ»

ՀՀ դրամ

Հրապարակով ձեռքբերման ամբողջական ծավալը	ՀՀՇ-ԱՄՍԴՀ-2016-ի ծածկագրով պայմանագրի համարը՝ ըստ ԳՄՄ դասակարգչի (CPV)	անվանումը	Ընդամենը	Ապրիլ	Մարտ	Փետրվար	Հունվար	Դեկտեմբեր	Նոյեմբեր	Հոկտեմբեր	Սեպտեմբեր	Օգոստոս	Հուլիս	Հունիս	Մայիս	Ապրիլ
			Պլանով վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ (դրամ)													
1	90311000/1	Փոխադրամիջոցի նրբի հետևի կասկածի սպասարկման և ծառայությունների	30 000								30 000					
2**	90511000/1	Փոխադրամիջոցի ներքին հետևի կասկածի սպասարկման և ծառայությունների	80 000								80 000					

* Վճարման ենթակա գումարները նշվելու են ամրագրված կարգով:
** Այդ յուրաքանչյուր մասով նախատեսված ծառայությունների ծավալները ոսկեզօծման համար սահմանվում է 10000 դրամից:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Դատական փոխգործակալներ
Հասցի՝ ք. Երևան, Կողբակի 15/1

ՀՎՀՀ՝ 02583241
ՀՀ՝ 90000119015
ՀՀ ՆԼ գործակալական վերադրություն

Պետական պատվիրատուի՝ Կ. Գևորգյան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«ԹԼԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ
Հասցի՝ ք. Երևան, Հանրապետության 51,
53, տարածք 47, 48, 50
ՀՎՀՀ՝ 03538733
ՀՀ՝ 21700015480600
«Էյ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Կատարող անձ՝ Լ. Ծնանյանան

_____
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
«__» ____ 2021 թ. կնքված
«ՀԴ-ՄԱԾՁԲ-21/14» ժամկետով պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«__» ____ 20 թ.

Պայմանագրի /արտոնեալ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ ինքը լիազորելով պայմանագրի կատարման վերաբերյալ «__» «__» 20 թ. դրքա գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայության							
	անվանումը	տեխնիկական բնութագրի հանձնման ընդունման	ըստ պայմանագրով հատատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հատատված գնման ժամանակացույցի	փաստացի	վնասման ենթակա պատճառ դրսևորվել	վնաս բնան ժամկ հող /ըստ վնաս ման ժամ անա կայ ության/

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար ինձ հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրանին նշված ծառայությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ընդունեց

_____

ստորագրություն

_____

անվանում, անուն

Կ.Տ.

Ընդունողն ընդունեց

_____

ստորագրություն

_____

անվանում, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
«Ա» «09» 2021 թ. կնքված
«ՊԴ-ՄՄԵՁԲ-21/14» ժամկետով պայմանագրի

Ձև N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու (ընդունելու) վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անվանում Կատարողի անվանում
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի (պայմանագրի ընդհանուր անվանումը) պայմանագրի համարը
գծման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնաժողովի ընդունման
ներկայացրել Պատվիրատուին հանձնել ստորև նշված ծառայությունները.

Ծառայություն		
անվանումը	չափման միավորը	քանակը (միավորների)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
պաշտոնը, անունը

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախաստորագրած անձի կարգավիճակը՝

_____
պաշտոնը, անունը

_____
ստորագրություն